

# ԿՐՈՆԱԿԱՆ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԻՍԿՈՒԹԻՒՆԸ.

Ը.

ԱԻԵՏԱՐԱՆՆ ՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ:

**Յ**ԻՍՈՒՄ քաղաքական գործերի մէջ չի խառնուել, աշխարհի քաղաքական դրութիւնը յեղացնելու համար նոր ծրագիր չի տուել—այդ յայտնի է: Նա համոզուած էր, որ իւր չայրը տասն և երկու գունա հրեշտակներ կուզարկէր իրեն օգնութեան, եթէ խնդրէր, բայց այդպիսի խնդիր չարաւ ամենատագնապալից ըոպէներում: Նորան կամեցան թագաւոր հռչակել, և նա խոյս տուաւ: Նա յիշաւի վերջին անգամ թագաւորական փառօք մուտք դորձեց երուսաղէմ՝ ներկայանալով այդպէս իբրև հորացէլի՛ ժողովրդին խոստացուած Մեսիան, բայց և այդ դէպքում մարդարէի գուշակութեան համաձայն նորա ընդունած խոնարհ երեսյթը պէտք է ամէն կասկած փարատէր, որ նա քաղաքական ցոյց անելու միտք չունէր: Թէ ի՞նչ էր իւր մեսիական իշխանութիւնը և ի՞նչպէս պէտք է դորժ դնէր՝ ցոյց տուաւ նա մանրավաճառներին տաճարից արտաքսելով: Նա ելնում է այսուեղ այնպիսիների դէմ, որոնք մարդոց հոգիների վերայ իշխանութիւն վերադրելով իրենց՝ ի չարն են դործածում այդ իշխանութիւնը—Ամէն երկրում բուն քաղաքական իշխանութեան կողքին լինում են այդպիսի անկոչ իշխանաւորներ, որոնց լուծը յաճախ առմենադաժան թագաւորների բռնակալութիւնից աւելի է ճնշում ժողովրդին: Յիսուսին արջապատող ժողովրդի մէջ այդ դերը կատարում էին քահանաներն ու փարիսեցիները, և ահա սոցա նկատմամբ անողոք դատաւոր է նա

և նորա բուռն դայրոյթը բոնկում է ամէն անդամ, երբ առիթ է ներկայանում սոցա կեղծաւոր արարքները, սուցա դայլային բնաւորութիւնը մերկացնելու Յիսուս հարկաւ դէմ չէ, որ նոքա իրենց իսկական իրաւունքները գործադրեն, բորոտութիւնից բժշկուածներին նա ինըը պատուիրում է. «Գնացէք ցոյց տուէք ձեզ քահանաներին», Քանի նոքա Աստուծոյ օրէնքն էին ուսուցանում՝ պէտք էր լսել նոցա, բայց երբ դալիս էր գործերին՝ հետեւ նոցա արդէն կարելի չէր, և այդ գործերի համար Յիսուս ամենածանր դատավճիռ է կարդում նոցա գլխին. «Վայ ձեզ, կարգացողներ ու փարիսեցիներ—կեղծաւոր գուք, որ ծեփած գերեզմանների էք նման, որոնք գրսից սիրուն են երևում, իսկ ներսը լիքն են ոսկորներով ու ամէն տեսակ պղծութեամբ»—Այսպէս, նա գործ ունէր սովորաբար հոգեոր կոչումը շահագործողների հետ, դոցա դէմ և արտայայտում է իւր զայրոյթը՝ Մի անդամ միայն առիթ է ներկայանում՝ Հերովդէս չորրորդապետի մասին խօսելու, և խորին արհամարհանք ենք գտնում՝ այդ փոքրիկ աշխարհական բոնաւորի հասցէին ուղղուած խօսքերի մէջ. «Գնացէք ասացէք այն աղուէսին»:

Ուրիշ է նորա վերաբերմունքը դէպի իսկական իշխանութիւնը՝ դէպի երկրի բուն տէրերն ու կառավարիչները՝ նոցա իրաւունքը Յիսուս միշտ ճանաչել է և որչափ իրեն բաժին կհասնէր՝ ենթարկուել երկրի մէջ տիրող օրէնքներին. Հարկաւ դարձեալ որոշ սահմաններում՝ նորա բոնած դիրքն այս խնդրում՝ պարզելու համար՝ շատ յաճախ յառաջ են բերում այն նշանաւոր խօսքը—«Ճուէք կայսերը կայսեր և Աստուծունը Աստուծուն», բայց սովորաբար սխալ են հասկանում և այնպիսի եղբակացութիւններ հանում, որ Փրկչի տուած իմաստից շատ հեռու են Սիալ են յատկապէս այն բոլոր բացատրութիւնները, որոնք աստուածային և երկրաւոր իշխանութիւններն իրեւ զուգակշիռ կամ միմեանց հետ ներքին կապ ունեցող սկզբունքներ են ներկայացնում։ Յիսուսի միտքն եղել է Ընդհակառակը ոչ թէ երկու իշխանութիւնները միացնել,

այլ բաժանել միմեանցից և խրաքանչփորի սահմանը որոշ շել։ Փարիսեցիները շփոթում՝ էին երկու իշխանութիւնները, նա ցոյց է տալիս, որ շփոթելու պատճառ չկայ, դրամը աշխարհային քան է, վրան կայսեր պատկերը գրոշմած, — թող ուրիմն կայսեր տան, հետեւում է անշուշտ, որ հոգին ու հոգեօր գործերն ևս Աստուծոյ պատկանելուց գեզի նա ուղղուած պէտք է լինին և այսուեղ ոչ մի հաշիւ չաւնենան։

Մեր առաջն է սակայն Յիսուսի մի ուրիշ խօսքը իշխանութեան մասին, որ շատ սակաւ անդամ է յիշուում, թէպէտ աւելի է միջոց տալիս խոր թափանցելու Փրկչի մտածմունքների մէջ, քան այդ յայտնի ընթերցուածը Մարկոս Փ. 42 կարդում ենք, թէ Յիսուս իւր աշակերտներին մօտ կանչելով առաց նրանց. «Գիտեք, որ աղքերի մէջ իշխան համարուողները նոցա դլսին են նստում և մեծամեծները բոհանում նոցա վրայ։ Իսկ այդպէս չէ ձեր մէջ։ այլ նա որ ձեզնից կամենում է մեծ լինել, պէտք է լինի ձեր սպասաւոր, և ով կամենում է ձեր առաջին լինել, պէտք է լինի անմէնքի ծառայ։ — Նկատեցէք այստեղ նախ դաղափարների այն մեծ յեղաշրջումը, որով ասում էինք, իրերն իրենց արժեքը փոխում են։ Յիսուս առանց այլեայլութեան խնդիրը հակառակ կողմով է դընում. մեծ լինել և գլուխ կանգնած՝ նշանակում է ծառայել. նորա աշակերտները պէտք է իշխել չկամենան, այլ ամէնքին ծառայելու պատրաստ գտնուին։ Դիտեցէք ապա, թէ ինչ դաղափար է յայտնում նա իւր ժամանակի իշխանաւորների մասին։ նոցա իշխանութիւնը ոյժի վերայ է հիմնուում, ուստի Յիսուսի համար բարոյական չափի տակ մտնել նոքա չեն կարող, մինչեւ իսկ սկզբունքով բոլորովին հակառակ դրութիւն են ներկայացնում. իշխանաւորների քանն ուրիշ է, բարոյական օրէնքով առաջնորդուողներին ուրիշ Ռւժի և նորա դործադրութեան վերայ հաստատուած իշխանութիւնը բարոյական արժեքը չունի. Ուստի Յիսուս պատուիրելով հնաղանդել իշխանութեանը, սովորեցնում է գնահատել այն իւր իսկական ար-

մէքի համեմատ, այսինքն նկատել իրրեւ բարոյական տեսակէտից անարժէք ինչ և կարգաւորել իւր կեանքն ուրիշ սկզբունքներով՝ այն բարոյական սկզբունքով, որ պահանջում է ծառայել, և ոչ իշխել։ Այսուղից արդէն կարելի է հետևեցնել, թէ ինչպէս պէտք է լինի ուրեմն մեր վերաբերմունքն առհասարակ դէպի երկրի մէջ իշխող օրէնքները՝ դէպի աշխարհի կարգերը։

Հարկու այս կէտում ևս պակաս մեծ չէ տարածայնութիւնը բարոյախօսների, քննադատների, հեղինակների մէջ։ Գերմանացի իրաւաբանութեան նշանաւոր ուսուցչապետ Զոհմ, ըստ էականին գրեթէ համաձայն Տալսոոյի հետ՝ պաշտպան է այն հայեացքի, թէ աւետարանն ամէն օրէնք մերժում է, աշխարհի բոլոր կարգերն անհիմն է համարում և պահանջում է, որ վերացուին կամ բարոյական հիմունքների վերայ դրուին։ Ուրիշներն ընդհակառակը վճռական կերպով պնդում են, թէ աւետարանը ոչ միայն դէմ չէ օրէնքին և նորա վերայ հաստատուած կարգերին, այլ և նուիրագործում, կարելի է ասել՝ աստուածային վաւերացումն է տալիս նոցա։—Ինչ վերջին տեսակէտին է վերաբերում, անկասկած, աւետարանով սրբագործուած համարել առանց բացառութեան այն ամէնը, ինչ որ ներկայ մի որոշ ժամում տիրող օրէնք ու կարգ է աշխարհի մէջ՝ աւետարանը ծաղրել կնշանակէ։ Թոյլ տալ և տանել մի բան—բոլորովին ուրիշ է, քան հաստատել ու պաշտպանել։ Հարցը կարող է միայն նորա մասոին լինել, թէ աւետարանն ինչ չափով, ինչ սահմաններում թոյլ է տալիս, որ աշխարհի օրէնքը պահուի և կատարուի։

Այդ հարցին պատասխանելու համար պէտք ի նկատի ունենանք դարձեալ, թէ Յիսուս ինչպիսի պայմաններով էր շրջապատուած՝ ինչ վարչութեան և ինչ օրէնքների հետ գործ ունէր։—Յիշեցինք մի անդամ, որ հրէայ ժողովրդի հասարակական կեանքը շատ բաղդաւոր չէր եղել և խեղծերի ու աղքատների համար տիրող կարգերի ճնշումն այսուղ շատ աւելի զգալի և ծանր էր, քան դուցէ ուրիշ որևէ տեղ։

Այժմ ևս փշաքաղուում է մարդ՝ նոցա հեծութեան աղաղակը լսելով մարդարէութեանց ու սաղմուների մէջ, Ոչինչ աղատ չէ այստեղ բռնաւորների, ոյժ ունեցողների կամայականութիւնից, որոնք ամէն օրէնք ըստ իւրեանց քմահաճութեան են մեկնում և շահագործում Յիսուս ապրում էր ահա այսպիսի մի ժողովրդի մէջ, որ դարերէ ի վեր օրէնք և արդարութիւն էր որոնել, և միայն ոյժ ու բռնութիւն տեսել, Բնական է, որ այդ ժողովուրդը ոկտէր յոյսը կորցնել երկրի վերայ երբ և իցէ արդարութիւն դանելուց և կասկածել օրէնքի բարոյական արժէքի մասին։ Յիրաւի աւետարանի մէջ կան այդպիսի մի կասկածի հետքեր, բայց դորա հետ մէկտեղ այն անդրդուելի համոզմունքը, թէ Աստուած այնուամենայնիւ արդար դատ կտեսնէ՝ եթէ ոչ ներկայ, գոնէ հանդերձեալ կեանքում։ — Յիսուս ուրեմն չէր կարող ոչ մի գէպքում օրէնք և իրաւունք արհամարհած մինել։ Ընդհակառակն իրրե անպայման ճշմարտութիւն ընդունելով, որ ամէնքի համար արդար դատաստան պէտք է մինի՝ այդ դատաստանի մէջ մասնակցութիւն է տալիս նաև ևւր աշակերտներին։ Նա ոչնչացնում է այն դատաստանը միայն, որ բռնի ուժով, ուստի և անարդարութեամբ է գործադրուում։ մինչդեռ արդարութիւնից ըղիսող դատաստանն այնչափ իրական է, անխուսափելի և հաստատուն, որ նորա գործադրութեան համար ոյժի կարիք իսկ չի դաշտուում։

Յայտնի է սակայն, որ Յիսուսի մի շաբք խօսքեր պահանջ են դնում նորա աշակերտների առաջ՝ ձեռք քաշել իրենց իրաւունքից և առհասարակ իրաւունքը գործադրելու ետևէ շլինել։ Բաւական է որ յիշենք այն նշանաւոր ասացուածքը. «Մի հակառակէք չարին, այլ եթէ մէկը քո աջ երեսին ապտակ է խփում» միւսն ևս նորան դէմ արա, եթէ մէկը կամենում է քեզ հետ դատ վարել ու բաճկրնդ խլել՝ թաղ վերարկուդ ևս տանէ»։ — Այստեղ արծարծուած ոկզբունքն ըստ երեսութիւն ամէն օրէնք ու կարգտապալում է հիմն ի վեր. ուստի և այս խօսքերը շատ անդամ վկայութիւն են բերում ապացուցանելու համար,

որ աւետարանն իրական կեանքի հետ հաշտեցնել չի կարելի, որ քրիստոնեաներն իրենց վարդապետին չեն հետեւմ ու հետեւել չեն կարող Բայց թէ որչափ անտեղի են այս հետեւութիւնները՝ պարզ լինի, եթէ վերոյիշեալ ասացուածքի հիմք եղող աւետարանական սկզբունքներն ինկատի ունենանք: ա) ինչպէս տեսանք, Յիսուս ամէն կասկած Աստուծոյ արդարագատութեան մասին փարատում է և ցոյց տալիս, որ յաղթողն ի վերջոյ բռնաւորի զօրութիւնը չպէտք է լինի, այլ նեղեալի իրաւունքը: բ) Երկրաւոր իրաւունքներն ըստ ինքեան չնշին ըտներ են և նոցակորուսան առանձին կարեւորութիւն չունի: գ) Իրերի գրութիւնն աշխարհում այնչափ անմիտթարական է, անիրաւութիւնն այնչափ զօրեղ, որ ճնշուածի ճիգը իւր իրաւունքները պաշտպանելու՝ զուր պէտք է անցնի: դ) Որ գլխաւորն է, ինչպէս Աստուած ողորմածութեամբ է գործնում իւր արդարութիւնը՝ իւր արել բարիների ու չարերի վերայ հաւասար կերպով ծագում, այդպէս և Յիսուսի հետեւողը պէտք է սէր արտայայտէ դէպի հակառակորդը՝ իւր հեղութեամբ զինաթափ անէ նրան:

Եւմիթէ իրօք այս պահանջն անիրագործելի է՝ գերբնական: Միթէ իւրաքանչիւր ոք չի աշխատում իւր տանը, իւր հարազատների և բարեկամների շրջանում գորա համեմատ վարուել և նոյնը սովորեցնել իւրայիններին: Կարող էր որ և է ընտանիք կամ ընկերութիւն հաստատ մնալ, եթէ նորա իւրաքանչիւր անդամը իւր իրաւունքն առաջ տանէր, չյօժարէր ոչ մի դէպքում հրաժարուել նորանից՝ չարը բարիսվ փոխանակել: Յիսուսի ցանկութիւնն ևս այն էր, որ նորա հետեւողները մի բարեկամական շրջան կազմեն՝ եղբայրների մի ընդարձակ խմբակցութիւն, և իւրաքանչիւրը վարուի այնպէս, ինչպէս հարազատը հարազատի հետ: Իսկ թէ ինչպէս պէտք է լինի արաբերութիւնը ժամանակակից պետութեան կամ հասարակութեան մէջ, որ շատ հեռու է այդ տեսակ եղբայրակցութիւնից և ըոլորովին տարբեր սկզբունքներով է առաջնորդուում՝ դա այլ հարց է, որի ամփոփած բոլոր բարդ խնդիրները Փրկչի յի-

շեալ խօսքով միայն պարզել ու լուծել կամենալ՝ անտեղի  
կլինէր ի հարկէ։ Նորա միւս խօսքերի պէս այս ևս իբրև  
օրէնք չի առուած, այլ իբրև առաջնորդող գաղափար։  
քրիստոնեան այդ գաղափարին հետևելով՝ ընդունակ պէտք  
է լինի յիրաւի հարկը պահանջած բովէում՝ հրաժարուել  
իւր իրաւունքից, և այդպէս իւր հաւատակիցների հետ  
աշխատել պատրաստելու մի ժողովարդ, որի մէջ իրաւ-  
ունքը բոնի ուժով չի պաշտպանուում, այլ դէպի բարին  
ունեցած յօժար հնազանդութեամբ՝ որը պահպանողը զա-  
նազան իրաւական կարգերը չեն, այլ փոխադարձ սէրն ու  
միմեանց ծառայելու բարի տրամադրութիւնը։

Ա. 4.



### ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒԽՉ ՍՈՒՐԲ ԳԻՐՅԱ. \*

Դոյութեան բացարձակ ճշմարտութիւնը խմանալ կա-  
րող է միայն Աստուած։ Աստուածային արդարութեան  
բացարձակ ճշմարտութիւնը մարդկութեանը յայտնել կարող  
է միմիայն Աստուծոյ խօսքը, Աստուածային Յայտնութիւնը։

Դէպի Աստուածային խօսքի ճշմարտութիւնը ունեցած  
հաւատն է միմիայն, որ կարող է հնարաւորութիւն տալ  
մարդկութեանը բանականօրէն դատելու և բանական կեանք  
վարելու։

Ով որ չի հաւատում Աստուծուն, առաւել ևս Աս-  
տուածային Յայտնութեանը, չի կարող երազել բացարձակ  
ճշմարտութիւնը ճանաչելու և բանական կեանք վարելու  
հնարաւորութեան մասին։

Դարերէ ի վեր ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը

\* Ն. Նեպիւմկ «Что есть истина» գրքից.